ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23, հեռ. (010) 44-11-36, ֆաքս՝ (010) 58-15-74, էլ. կայք՝ justexpert.am

№ 0586-2020

«30» 09 2020 թ.

«ԳԱՐԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՆԱՐԻՆԵ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Տիգրանյան,

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գարիկ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2020 թվականի հունվարի 15-ին կնքված Ծառայությունների մատուցման գնման N ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-01/20 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 1 Հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ձեր ընկերությունը պարտավոր է սահմանված կարգով մատուցել գնումները համակարգողի ծառայություններ՝ մեկ անձից գնման և գնանշման հարցման ընթացակարգերով գնումներ կատարելիս:

2020 թվականի օգոստոսի 25-ին Պատվիրատուի կողմից մեկ անձից գնման ընթացակարգով կազմակերպվել է տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների գնում: Ընթացակարգին մասնակցելու համար հրավեր է ուղարկվել թվով վեց կազմակերպությունների: Հայտերի գնահատման արդյունքում առաջացել է բանակցությունների անհրաժեշտություն, որին Ձեր ընկերության ներկայացուցիչը չի ներկայացել և հեռախոսազանգերին չի պատասխանել: Ավելի ուշ, կապի դուրս են եկել հեռախոսային հաղորդագրության միջոցով և հայտնել, որ ընկերությունն աշխատում է ծանրաբեռնված ռեժիմով, ուստի այդ պատճառով տվյալ պահին չի կարող զբաղվել Պատվիրատուի հարցերով, սակայն միաժամանակ տարօրինակ կերպով անդրադարձել է մեկ անձից գնման ընթացակարգով գնումները կատարելու պայմանները վերանայելու

խնդրին՝ որպես հիմնավորում ներկայացնելով աշխատանքի ծավալների աճը, այն է՝ տվյալ դեպքում գնման ընթացակարգի հրավերն ուղարկվել է ոչ թե մեկ, այլ միաժամանակ վեց կազմակերպությունների: Նշել են նաև, որ պայմանների չվերանայման դեպքում հրաժարվում են մեկ անձից գնման ընթացակարգով ծառայությունները մատուցելուց և այլևս նշված հիմնավորմամբ կապի դուրս չեն եկել արդեն իսկ սկսված գնման գործընթացի հետագա ընթացքն ապահովելու նպատակով, որով, ըստ էության, փորձել են կազմալուծել Պատվիրատուի բնականոն գործունեությունը՝ գնումների մասով:

Անհրաժեշտ է հավելել, որ ի պատասխան Ձեր ներկայացրած պատճառաբանության՝ պարզաբանում ենք, որ մեկ անձից գնման ընթացակարգով գնումները կատարելու պայմանների վերանայման անհրաժեշտություն չի կարող լինել, քանի որ Պայմանագրի թիվ 1 Հավելվածում՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում, հստակ սահմանված են գնումները համակարգողի գործառույթները և դրանց համար վճարման ենթակա գումարի չափերը՝ առանց ծավալների հստակեցման:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Ձեր կազմակերպության գործելաոճը՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, 2020 թվականի սեպտեմբերի 30-ից ամբողջությամբ, միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Հարգանքով,
Տնօրեն՝ **Տ. Հովհաննիսյան**

Կատարող՝ գլխավոր հաշվապահ Գ.Կոստանյան
հեռ. (010) 44-11-36 (17)